ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«06» 10 2022 թ.
№ 91615/2-1368

«ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ (ՀՎՀՀ 00918262) տնօրեն
Մ. Սաֆարյանին
հասցե՝ ք. Երևան, Սմբատ Զորավարի 11/1
հեռ. 041-23-02-22

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-8/11» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում որպես կանխիկ փողի ձևով հայտի ապահովում «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ներկայացվել է N 000867 բյուջետային փոխանցումը 3 739 375 դրամի չափով: Սակայն «ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ-ից 2022 թվականի սեպտեմբերի 28-ին ստացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերության կողմից ԻՆՏԵՐՆԵՏ ԲԱՆԿ համակարգով 3 739 375 ՀՀ դրամ գումարով կատարվել է վճարման կարգադրություն, որը սակայն աշխատանքային կարգավիճակից չեղարկվել է և արդյունքում գումարի փոխանցումը կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000466» գանձապետական հաշվին չի կատարվել: Այսինքն՝ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը Ընկերությունը ներկայացրել է կեղծ փաստաթուղթ, ինչը մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում հիմք կհանդիսանար պայմանագիրը չկնքելու համար:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 12.08.2022թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-22-8/11-1 գնման պայմանագրի 8.3 կետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2022թ. սեպտեմբերի 30-ին միակողմանի ամբողջությամբ լուծել է նշված պայմանագիրը:

Տեղեկացնում եմ նաև, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը միաժամանակ ձեռնարկել է միջոցներ.

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

1. «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումների գանձման ուղղությամբ:

2. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագրի միակողման լուծման հիմքերը իրավապահ մարմիններին ուղարկելու համար:

Միաժամանակ հիմք ընդունելով ՀՀ պաշտպանության նախարարության և «ՍԴԴ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի միջև 12.08.2022թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-22-8/11-1 գնման պայմանագրի 8.3 կետը, տեղեկացնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից այլ ընկերությունից նշված պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրով և քանակով A4 ձևաչափի թուղթ ձեռքբերելու դեպքում Ընկերությունը պարտավոր է փոխհատուցել գնային տարբերությունը՝ եթե նոր պայմանագիրը կնքվում է ավելի թանկ գնով, որի վերաբերյալ Ձեզ լրացուցիչ կծանուցվի:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ